լով, դժպհելով, զեղխազար վարդապետս մեր տաճ-
կացեալ է բաջազելով։ Իրաւո՛ւնք մեր. զիր առաքեալ
եմք և սպասեմք, և թէ ոչ՝ զկնի ապահարզան, ապա
հարազան։ Բայց դու, վասն Քրիստոսի աղաչեմք,
հեռի լե՛ր, ի բաց ե՛ր թ, զի մի՛ յետինն քան զառա-
ջինն չար լիցի. զի յագեցաք և անկարօտ եմք։ Բա-
ւեսցի ներմտածութեան քո։ Ցունիս ամսոյ ի Դ գրե-
ցաւ։

Ուրբաթ օր (6 Յունէ) Վարդապետն ի Ղալաթա
գնաց։

Եւ Շաբաթիս օր (7 Յունէ) գնացաք ի սէյիր տօ-
նանմին եւ եկն դատբրդա դափուտանին Քէնան փա-
շան տաւուլով եւ զուրնայով, եւ ինքն կանգնեալ ի
խելս նաւին և բարև տայր առ մեզ և անց, և որչափ
նաւ կայր զկնի նորա՝ ամենեքեան քաշեցան ՃԻԱ
կտոր, եւ գնացեալ եհաս ի դէմ պալատի թագաւորին
եւ արգիլեցան[1]) նաւքն եւ ինքն եմուտ մօտ ի թա-
գաւորն հանդերձ չորպաճովքն եւ Բ ժամ անդ ար-
գիլեալ եւ ապա ել ի թագաւորէն եւ նստաւ ի նաւն
եւ սկսան ամենեքեան զթօփքն արձակել ի նշան եր-
թալուն. եւ գնացին ի Պէշիքտաշն, եւ կէս աւուրս
ելեալ գնացին անտի։

Օրս Մղտեսի Սարգիսն Երուսաղէմացի և Եաղուպ
թէրճիմանն գնացին ի Պուրսայ և թուղթ գրեց Վար-
դապետն առ Կիւրակոս վարդապետն թէ ի հասանել
թղթիս ի քեզ՝ փոյթ ընդ փոյթ գաս. նոյնպէս և առ
Իգնատիոս վարդապետն ի Կաֆա և առ Սարգիս վար-
դապետն ի յԱրզրում թէ Փոյթ ընդ փոյթ ի հասանել
թղթիս ի ձեզ՝ եկեալ հասէք առ մեզ։ Եւ զի լու եղև
թէ Մուղնեցի Յովանէսն ելեալ եւ գայ առ Աստուա-
ծատուր վարդապետն իբր թէ հնազանդելով նմա,

1) արգիլեցաւ.